

ԽՈՐՀՐԳԱՆԻՇ

ԱՐԱՐԱՏ ԼԵՌԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հոգևոր առումով խորհուրդ մաս գաղտնիք է նշանակում, որը մեր առօրեական մտքին անհաս է, մինչև չխորանանք եության մեջ: Եվ այժմ պիտի փորձեն ընթերցողին հնարավորինս ներկայացնել Արարատ լեռան խորհուրդը, որն ամեն օր տեսնում ենք, բայց միաժամանակ չենք տեսնում:

Այս անունը, որ դարերով համահունչ է դարձել Հայաստան անվանը, իր ամենահին վկայությունն ունի Աստվածաշունչ մատյանից. «Յոթներորդ ամսի քսանյոթին տապանը նստեց Արարատ լեռան վրա» (Ծննդ 8.4): Աստվածաշունչում ընդհանրապես սա առաջին վկայությունն է որևէ լեռան մասին: Երբ Նոյը քրիեղեղից հետո Տիրոջից հրաման ստացավ տապանից ցամաք իջնել իր ընտանիքի հետ, նա առաջինը ոտք դրեց Արարատ լեռան լանջին ու այդ հողի վրա հիմնադրեց ու կառուցեց ապագա քաղաքների և գավառների մայրը և անվանեց Նախավան, այսինքն ազգերի հոր և իր ընտանիքի առաջին ավան, որը տասներորդ դարից հետո կոչվել է Նախիջևան:

Այստեղ Նոյը առաջին գոհասեղանը պատրաստեց Աստծուն պատարագ մատուցելու համար: Այս հողում էլ ամփոփվեց այդ արդար ու աստվածավախ այրի մարմինը: Որպես հաստատունն դրա, հայոց պատմիչները փաստում են, որ Նոյի կինը՝ Նոյեմզարան թաղված է հայոց Վասպուրականի նահանգի Մարանդ, կամ Մայրավանդ կոչվող վայրում: Նոյ Արարատ լեռան լանջին հետագայում հիմքը դրեց ու կառուցեց Նախավանը, այսինքն՝ ազգերի հոր և իր ընտանիքի առաջին ավանը:

Նաև, ըստ Սուրբ Գրքի, Աստված Եդեմի դրախտը ստեղծեց և իր արարած մարդուն Ադամին, այնտեղ դրեց: Աստծո Խոսքը մեզ տեղեկացնում է, որ. «Մի գետ էր բխում Եդեմից, որը բաժանվում էր չորս ճյուղերի, որպեսզի ոռոգեր պարտեզը: Մեկի անունը Փիսոն էր, երկրորդ գետի անունը Գեհոն էր, երրորդ գետի անունը Տիգրիս էր, չորրորդ գետը Եփրատն էր: Տեղ Աստվածը իր ստեղծած մարդուն տեղավորեց բերկրության դրախտում, որպեսզի սա մշակի և պահպանի այն» (Ծննդոց 2.8-17):

Իսկ պատմաբանները մեզ հեշտությամբ կապացուցեն, որ Փիսոնը համաճումն հայոց Փիսիսն է, որ նաև ճորոխ է կոչվել, Գեհոնը մեր Արաքսն է, իսկ մյուս երկուսի անունները այդպես էլ չեն փոխվել (տես լատինական հիմնավորք քարտեզը, որտեղ մեջտեղում Եդեմի դրախտն է իր չորս գետերով, իսկ վերևում և աջ մասում երկու անգամ նշված է Արմենիա անունը):

Քանի որ Աստվածաշունչ մատյանում ամեն բան իր խորհրդաբանական նշանակությունը ունի, ապա այս էլ իմանանք, որ ըստ հայտնի աստվածաբան Փիլոն Եբրայեցու, Եդեմի գետը խորհրդանշում է Աստծո իմաստությունից բխող բարության առաքինությունը, որը բաժանվելով չորս առանձին գետերի, ոռոգում է ողջ երկիրը, և Փիսոնը խոհականության խորհրդանշին է, Գեհոնը՝ արհուրյան, Տիգրիսը՝ ողջախոհության, իսկ Եփրատը, կամ Արածանին՝ արդարության (Փիլոն Եբրայեցի, «Ճառք»): Ու քանի որ Արարիչ Աստված կամեցավ որ մեր ազգը մկրտվի Եփրատում, ապա դա



նշանակում է, որ Տեղը մեզ առաջինը արդարացրեց մեր մեղքերից և իր անդրանիկը դարձրեց համայն ազգերից, որոնք պետք է դավանեին Աստծո Որդու փրկարար անունը: Այս էլ իմանանք, որ, ըստ ժամանակակից գիտնականների լուրջ ուսումնասիրությունների, կորուսյալ դրախտը այժմ գտնվում է Վանա լճի հատակում: Ջրիեղեղից հետո Արարիչ Աստված երկրային դրախտը իսպառ ծածկեց մարդկանց աչքերից, ճշմարիտ հավատի աչքեր տվեց, որ երկնային ու անանց դրախտին սևեռենք:

Իսկ Ղևոնդ Ալիշանի պնդմամբ, աշխարհի չորս ամենահինավոր ազգերից են համարվում հայերը, որոնք, ըստ Աստվածաշունչի, սերում են անմիջապես Նոյի որդի Հաբեթի թոռից՝ Թորգոմից, հրեաները՝ Աբրահամից, որը Նոյից հետո տասներորդն էր, մյուս երկուսն էլ չինացիներն ու հնդկներն են համարվում: Նա հիմնվել է Հովհաննես Իմաստասեր Սարկավազ վարդապետի հաշվարկներին, ըստ որի, հայոց ազգի տարիքը կազմում է 2492 տարի, Քրիստոսից առաջ ու գումարած ներկա թվարկությունը: Այսինքն մեր ազգի տարիքն է 4500 տարի:

Վերջում ոչ թե կեղծ հայրենասիրական պաթոսով, այլ այժմյան հոգևոր վիճակին համապատասխան մի մտորում ևս ավելացնենք. որ Արարատ լեռը մեր ազգի լինելության մշտանա ապացույցն է, դա անհերքելի է, բայց որ այն արդեն մեկ դար է գերության մեջ է անօրենների ձեռքում, դա ևս փաստ է: Բայց այստեղ կարևոր է, թե ինչու է Տեղը թույլ տվել, որ սրբությունը անուրբների գերության մեջ մնա:

Ըստ իս, մեր ազգը դեռևս հոգևորապես անպատրաստ է Արարատ լեռը հետ ստանալու, քանի որ սրբության հետ անսրբությամբ վարվելով, մենք առավել մեծ պատժի կենթարկվեցինք: Ասածիս ապացույց եք ուզում. խնդրենք, գնացեք մեր ազգի համար սուրբ վայր համարվող Եդեմի հուշահամալիր, և դեռ այդ վայրը չմտած, մենք մուտքի մոտ սրբապղծության ամենատանձր ամենատանձր սինվոլը կտեսնենք. մերկանդամ ինչ-որ պարուհու-կնոջ ռեկլամային սիլուետ, որը ձեզ «հրապուրելով» կանչում է գիշերային արկածների ակումբ, որը ճիշտ այդ հուշահամալիրի հարևանությամբ է գտնվում: Իսկ քիչ այն կողմ «Հավանա» կոչվող սրճարան, թե ռեստորան անունով մի շինություն է ծավալվել: Թե ի՞նչ կապ ունի գիշերային զվարճալիքներն ու Կուբայի մայրաքաղաքը մեր նահատակների հուշահամալիրի հետ, բացարձակապես անհասկանալի է:

Հիմա պատկերացում եք, թե մեր «տղերքը» ինչեր, ինչեր կսարքեն Արարատի փեշերին, կամ մույնիսկ ծյունաճերմակ զագաթին, եթե այդ սուրբ լեռը մեզ վերադարձվեր: 21° որ արդեն իսկ օդանավակայանից Հայաստանի մայրաքաղաք մտնելիս մեր ազգի առաջին այցեքարտը հենց դրանք են. գիշերային ակումբներն ու վառ արտահայտված անուններով կազինո-խաղատները:

**Այս մտորումները ձեզ մատուցեց
Երուսաղեմի սուրբ Հակոբյանց վարժարանի կրոնի նախկին ուսուցիչ
Սեդրուհան ԲԱԲԱՋԱՆՅԱՆԸ**

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՊԱՆԱՔԱՐ

Համադանում հայտնաբերվել է պատմական նշանակություն ունեցող հայկական մի տապանաքար, որը մեր օրերն է հասել Իրանի Ղազար հարստության թագավորներից Մոհամմադալի շահի միապետության և Սահմանադրական շարժման ժամանակաշրջանից՝ 1912-ի մայիսի 6-ից: Տապանաքարում ունի 104 սմ երկարություն, 58 սմ լայնություն և վրան 11 տողանոց միացյալ տառերով գրություն կա: Այն պատկանում է հայազգի նահատակ

Տրդատ Զիջյանին: Հայերեն գրությամբ այս տապանաքարը վերջերս հայտնաբերվել է Իրանի մշակութային ժառանգության կազմակերպության միջոցով՝ Համադանի հայոց առաքելական Ս. Ստեփանոս եկեղեցու մոտակայքում, Մարաստանի պատմական Դեգնաթան մայրաքաղաքի հետագոտությունների ընթացքում: Տապանաքարի վերին մասը զարդարված է խաչով, որի ձախ կողմում հրացան, իսկ աջ կողմում՝ ատրճանակ է քանդակ-

ված: Հաշվի առնելով, որ տապանաքարի թվականը համընկնում է ազգային-հեղափոխական գործիչ Եփրեմ խանի նահատակության թվականին, ենթադրվում է, որ այս տապանաքարը պատկանում է Եփրեմ խանի խմբի մաս կազմող 12 հայ կամավորներից մեկին, որոնք մրա կողքին մասնակցել են Համադան քաղաքից 70 կմ հեռավորությամբ գտնվող Սուրբի գյուղի բերդի գրավման նպատակով մղված կռիվներին:

«Ալիք» օրաթերթ, Թեհրան

Լոռու մարզի Մարգահովիտ գյուղի պատմամշակութային հուշարձանները (Պատմական ակնարկ հետադարձ հայացքով)

Աղստև գետի հովիտը հազարամյակների ընթացքում մեծ դեր է խաղացել հայ ժողովրդի տնտեսական և մշակութային պատմության ասպարեզում: Այդ մշակույթի ամենավաղ օրինակները մինչև օրս պահպանվել են նշված տարածքում: Սակայն հովտի հնագույն անցյալը և այն ներկայացնող հնագիտական հուշարձանները չափազանց թույլ են ուսումնասիրված՝ հատկապես գետի վերին հոսանքում: Վերջին տարիների հետազոտությունները ցույց են տալիս, որ այս տարածքը ևս չափազանց հարուստ է բրոնզ-երկաթեդարյան բնակատեղիներով և դամբարանադաշտերով, ինչպես նաև միջնադարյան բնակավայրերով ու գյուղատեղիներով: Ուրույն հետաքրքրություն ներկայացնող հուշարձանների մեծ մասը, ցավոք, դուրս է մնացել ՀՀ կառավարության կողմից հաստատված Լոռու մարզի հուշարձանների ցուցակից:

Հատկապես կարևորվում է Մարգահովիտ գյուղի տարածքում գտնվող Սարի Սոփ բլրի վրա տեղակայված բնակատեղին, որի մշակութային շերտերը պատկանում են հիմնականում Քուռ-արաքսյան մշակույթի եզրափակիչ փուլերին: Բնակատեղին մեզ է հասել համարյա անխաթար վիճակում: Նրա հարավային կողմում նկատելի են պաշտպանական պարսպաշարի հետքեր, իսկ բլրի գագաթին հանդիպում են խաչքարերի բեկորներ և արաքստառ արձանագրություններ ունեցող տապանաքարեր: Ըստ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տվյալների՝ բնակատեղիի մակերեսից հավաքված նյութերը խեցանոթների բեկորները և վանակատեղի առարկաները ցույց են տալիս, որ այդ տարածքը բնակեցվել է առնվազն Ք. ա. 27-26 դարերում: Այս տարի ակնկալվում է պեղումներ իրականացնել վերոհիշյալ տարածքում, որից ձեռք բերված նյութերը մեծ նշանակություն կունենան ոչ միայն հյուսիս-արևելյան Հայաստանի, այլև ողջ տարածաշրջանի, Քուռ-արաքսյան մշակույթի եզրափակիչ փուլերի պատմական օրինաչափությունները լուսաբանելու և ընկալելու գործում, ինչպես նաև կարող են նպաստել Մարգահովիտ համայնքի սահմաններում զբոսաշրջության զարգացմանը:

Նախկին գյուղատեղի Գորավերը գտնվում է Մարգահովիտից 2 կմ հյուսիս-արևմուտք: Ավերակները համարյա ամեն տեղում են: Ասում են, թե այս ավերակների տեղում առաջ գյուղ է եղել, որն ունեցել է շատ դաժան մի զգիր: Հարկ հավաքելիս, զորակոչի կանչելիս և ուրիշ առիթներով զգիրը այնքան է նեղում գյուղացիներին, որ նրանք ստիպված թողնում են իրենց տունն ու տեղը և հեռանում գյուղից: Ժամանակ անց, երբ զգիրը ծերանում է և զգում, որ մեռնելու օրերը մոտեցել են, որոշում է նորից սարսափ ազդել գյուղացիներին: Կանչում է գյուղի քահանային,

հաղորդություն ընդունում և պատվիրում նրան մեռնելուց հետո իրեն թաղելու փոխարեն կախ տալ մի բարձր ծառից: Երբ զգիրը մեռնում է, քահանան կատարում է նրա պատվերը: Մոտակա գյուղերի բնակիչները տեսնելով ծառից կախված զգիրին, ուրախանում են և հավաքվելով նրա դիակի շուրջը՝ պար են բռնում ու երգատում: Այդ ժամանակ ծառի մոտով անցնելիս է լինում մոլորվել: Նկատելով կախված զգիրին և կարծելով, որ դա գյուղացիների արածն է, հրամայում է այրել գյուղը: Մոլորվի հրամանը անմիջապես կատարվում է: Դրանից հետո գյուղատեղի ավերակները կոչվում են Գորավեր:

Ըստ ՀՀ ԳԱԱ Հնաբանության ու ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Բորիս Գասպարյանի՝ Գորավեր բնակատեղին իրենից ներկայացնում է մի բազմաշերտ, սակայն արդեն գործնականում ավերման եզրին հասած հուշարձան, որի տարածքից հավաքված նյութերը պատկանում են թե Քուռ-արաքսյան, թե ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան, թե վաղ միջնադարյան և թե զարգացած միջնադարյան փուլերին: Վաղ միջնադարյան համալիրին պատկանող խեցանոթների ճմուռներից հետ առկա են նաև կղմիդրների բեկորներ, ինչը խոսում է ժամանակին այստեղ առկա եկեղեցական շինության մասին:

Աչաջուր հանդամասը ևս հետաքրքրություն է ներկայացնում, որտեղ հայտնաբերվել են խոշոր չափեր ունեցող սալարկղային ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան դամբարաններ, որոնց մի մասը ժամանակին ավիրվել է: Տարածքում առկա են նաև միջնադարյան գյուղատեղիի հետքեր, որտեղ պահպանվել են խաչքարեր և տապանաքարեր:

Այբասան գյուղատեղին գտնվում է ՀՍՍՀ գյուղից մոտ 3 կմ հարավ-արևմուտք, որտեղ հայտնաբերվել են հնագույն նյութական մշակույթի մնացորդներ:

Ըստ մեզ հասած բանավոր ավանդությունների՝ Այբասանը եղել է դարանոց: Գուգարքի բղեշխ Աշուշայի հրավերով տարածաշրջանում գտնվող Մեսրոպ Մաշտոցը դպրոց է բացել նաև Այբասանում: Այստեղից էլ գալիս է գյուղատեղիի անվան ստուգաբանությունը՝ այբ ասողներ, տառ ասողներ, այբ ասան:

Գյուղատեղիի մակերևույթից հավաքվել են վաղ և ուշ միջնադարյան ժամանակաշրջանի խեցանոթների բեկորներ: Մինչ այժմ կանգուն է վաղ միջնադարյան խաչքարը:

Այբասանում պետք է առանձնացնել հատկապես 19-րդ դարի ջրաղաց, որը գտնվում է գյուղատեղիի արևմտյան եզրին: Այն իրենից ներկայացնում է մեկ աղացաքարով ջրաղաց: Ըստ ՀՀ ԳԱԱ Հնաբանության ու ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ս. Հոբոսյանի՝ մինչև 20-րդ դարի 50-ական թվականները ջրաղացներ կային ՀՀ, այդ թվում և Լոռու մարզի գրեթե բոլոր բնակավայրերում, որոնք

կոլեկտիվացման, հետագա տեխնիկական վերազինման և այլ պատճառներով դուրս եկան շահագործումից, աստիճանաբար մոռացվեցին ու վերացան: Դարեր գոյատևած մշակութային կարևորագույն մի բնագավառ ի չիք դարձավ, թողնելով աղոտ հուշեր ավերակ շենքերի, առուների, որոշ պարագաների ու բանափայտական նյութի ձևով: Պահպանված ջրաղացը խիստ համեստ շինություն է, գուցե ամենապարզունակներից մեկը համանման հազարավոր ավերված արտադրական կառույցներից, բայց նրա մեծագույն արժեքը կայանում է նրանում, որ միակն է մարզի տարածքում: Որպես մշակութային եզակի արժեք, խիստ կարևոր է շինության պահպանությունը, մասնակի վերանորոգումն ու սեզոնային գործարկումը:

Այբասան գյուղատեղիից արևմուտք՝ մոտակա բլրի վրա, պահպանվել են նաև ամրոց-բնակատեղիի մնացորդներ, նկատելի են պաշտպանական պարսպաշարի հետքեր:

Ամրոց-բնակատեղիի հետքեր են նշմարվում նաև գյուղի հյուսիսային մասում գտնվող Քարհանք կոչվող բլրի մակերեսին: Բացի վերոհիշյալ բնակատեղիներից՝ Մարգահովիտի տարածքում եղել են նաև Զիթհանքեր, Զատոյի քարեր գյուղերը:

Նախկինում գյուղը թագավորանիստ անունն է կրել՝ մտնելով Երևանի մահամզի Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Ցավոք, գյուղի նախկին անվան թագավորանիստի հետ կապված ընդարձակ գրավոր տեղեկություններ չունենք:

1860-ական թվականներին գյուղում հիմնադրվում է փոստային կայանը, տեղադրվում է փոստային կայանների միջև հեռավորությունը հաստատող սյունը (верстак), որը կանգուն է մինչև այժմ:

Գյուղի հյուսիսային մասում գտնվում է Հայրենական Մեծ Պատերազմում զոհվածների հուշարձանը:

Կանգուն է Նտիկան Ծախումյանի կիսանդրին (գործ՝ Լորիկ Անանյանի), որն ընդգրկված է մարզի հուշարձանների ցուցակում:

Ինչպես իր «Հայրենապատում» գրքի երկրորդ հատորում նշել է Սերո Խանգադյանը՝ Մարգահովիտի եկեղեցին կառուցվել է հեթանոսական տաճարի հիմքերի վրա, ընդամին նշելով, ու դա եղել է Անահիտ աստվածուհու տաճարը: Չնայած նրան, որ եկեղեցու պատի վրա կա գրառում «Շինեալ 1872 ամ», եկեղեցու եռանակ բազիլիկ ոճը, պատերի մեջ տեղադրված 5-րդ դարի քարերը (ինեքսանների վկայությամբ), խաչքարերը, հիմք են տալիս ասելու, ու դա վաղ միջնադարյան կառույց է, իսկ 1872 թ.՝ դա վերակառուցման տարեթիվն է: Եկեղեցու թաղակապ ծածկերով պատերը սրբատաշ են, երկվանջ տանիքը կառուցված է տուֆե զլանավոր ծածկապարեղով, մուտքը հարավից է, լուսավորվում է հարավային և արևմտյան պատի երկուսական և արևելյան պատի 3 ուղղանկյուն բացվածքներով, որոնք վերնամասում ունեն կա-

մարածն ավարտ: Ունի վեցամիսոս քարաշեն զանգակաշտարակ, որն ավարտվում է վեղարածն ծածկով: Առջևի մասում նշմարվում են ավելի վաղ ժամանակաշրջանի եկեղեցու կամ մատուռի հետքեր, պահպանվել է մկրտության քարե ավազանը: Ի թիվս այլոց, եկեղեցուն քահանայություն է արել նաև Հարություն Վարդապետը, ում գերեզմանը գտնվում է եկեղեցու բակում:

Գյուղը հիմնվել է 10-րդ դարում՝ Գրիգոր Համզե Պաղատունու կողմից: Առաջին գրավոր հիշատակությունը կատարել է պատմաբան, գրող Առաքել Դավիթբեցին, նկարագրելով Պարսկաստանի Շահ-Աբասի արշավանքը Հայաստան. «...Տարագրելիս ոչ թե մեկ կամ երկու գավառ քչեց Պարսկաստան, այլ շատ գավառներ: Եվ սկսեցին Նախիջևանի գավառներից, անցան եղեգնածոր, Գեղամա ծովեզերքով, Լոռիով, Համզաչիման գավառը, Ապարանը...»: Այսպիսով՝ 17-րդ դարի սկզբին գյուղն արդեն գավառակենտրոն էր:

Նախնիների պատմությունը կորստի չմատնելու պահանջը, պատմամշակութային հարուստ ժառանգությունը պահպանելու նպատակադրվածությունը հիմք հանդիսացան Մարգահովիտ համայնքում հիմնելու երկրագիտական թանգարան, որտեղ պահպանվում են գյուղից և նրա շրջակայքից ձեռք բերված մշակութային արժեքավոր գտածոները: Գյուղի մասին խոսելիս գյուղապետ Սեյրան Անանյանը հպարտությամբ է ներկայացնում թանգարանը. «Համայնքն իր պատմությամբ է համայնք, իսկ թանգարանն էլ այդ պատմության վկայագիրն է»:

Թանգարանում ցուցադրվում են Ք.ա. 3-րդ հազարամյակից մինչև մեր օրերն ընկած բազմաթիվ հետաքրքիր և յուրօրինակ նմուշներ՝ վաղ և ուշ բրոնզեդարյան խեցեղեններ, գավաթներ, կարասներ, թասեր, դաշույն, ապարանջաններ, բերիչ, փոխանակման միավոր: Այդ ժամանակահատվածի ուշագրավ ցուցանմուշ է ծխական սափորը (կեռնոս): Հետաքրքիր նմուշ է նաև 5-րդ դարի իշխանական կնիքով մատանին, աղամանը: Այցելուների ուշադրությունն են գրավում 19-րդ դարի խուրձինները, կարպետները, կենցաղային ու տնտեսական իրերը: Թանգարանը սոսկ հին իրերի պահպանման վայր չէ, այնտեղ ի մի է բերված գյուղի պատմությունը: Ցուցավաճառակների նկարները պատկերում են գյուղի դիտարժան տեսարանները, առանձին էջերով ներկայացված են նշանավոր համզաչիմանցիները, գյուղի աշխարհահռչակ և անվանի սպորտսմենները, գիտության ու մշակույթի մեծերը, երկրորդ աշխարհամարտում փառքով պսակվածները:

Մարգահովիտը աշխարհին է տվել բազում անվանի մարդիկ, որոնք աչքի են ընկել ամենատարբեր բնագավառներում: Գյուղի ծնունդ են Սովետական Միության հերոս Ավագ Անտինյանը, գնդապետ, դիվիզիայի հրամանատար Ջաքար Դերձյանը, Մոսկվայի Պետրովսկի անվան վիրաբուժական ակադեմիայի միկրովիրաբուժության պրոֆեսոր, բժշկական ծառայության գեներալ-մայոր Նորայր Մատինյանը, Հայաստանի գրողների միության Լուռու բաժանմունքի քարտուղար, անվանի գրող Հրաչյա Սարուխանը, այլոք:

Ավագ ԽԱՌԱՏՅԱՆ
Մարգահովիտի երկրագիտական
թանգարանի տնօրեն

ՀԱՐՍԱՆԻՔ

(սկիզբը՝ նախորդ համարներում)

Հին Հայաստանում հարսանիքները գրեթե բացառապես տեղի էին ունենում աշնան և ծննդանիների, երբ դաշտային աշխատանքներն ավարտվում էին և ամբարները լցվում տարվա պաշարով: Տղայի և աղջկա ընտանիքներում հարսանեկան նախապատրաստությունները սկսվում էին հինգ-շաբթի օրը: Ըստ ավանդույթի, հարսանյաց հանդեսները տևում էին յոթ օր: Յոթ թիվն ուներ կախարդական նշանակություն: 19-րդ դարում յոթ օր հարսանիք անելու ավանդույթը պահպանվում էր միայն ունևոր գերդաստաններում, մյուս խավերի ներկայացուցիչները սահմանափակվում էին 2-3 օրով:

Ձևավորվել էին նաև հարսանիք հրավիրելու ավանդական ձևեր: Ամենատարածվածը զուռնա-նաղարայով կոմպիլերն էր: Նվագողները բարձրանում էին հարսնատան կտուրը և հրավերի հատուկ եղանակ էին նվագում:

Եթե զուռնա-դիվ չկար, հրավիրում էին բանավոր խոսքով, միաժամանակ տանտիրոջն առաջարկում մի բաժակ օղի կամ չոր միրգ:

19-րդ դարում քաղաքներում, իսկ 20-րդ դարում արդեն գյուղական բնակավայրերում մեծ տարածում գտավ հրավիրատոմսերով հարսանիք հրավիրելը:

Հարսանիքին նախորդում էին հանդեսի նախնական պատրաստությունները: Կտրվածքի ժամանակ որոշվում էր հարսնառի օրը: Հարսան գյուղից հարս բերելու դեպքում աղջկա կողմը, իմանալով հարսնառի մասնակիցների թիվը, որոշում էր նրանց հյուրընկալողներին: Նախապես ընտրվում էին փեսացուին և հարսնացուին զբաղեցնող մականներն ու ծաղկոցավորները:

Պսակվող աղջիկներն ու տղաներն ունենում էին հատուկ ընտրված խմբեր, որոնք մասնակցում էին հարսանեկան բոլոր արարողություններին և հանդիսավորություն էին հաղորդում հանդեսին: Փեսայի շքախմբի անդամները կոչվում էին մակար, թագվորցի, փեսամանուկ, փեսաղբեր, փեսավեր, փեսածու, մանկտիք, մոմկտիք, ինչպես նաև օտար մերմիքով՝ ազաբազաբարի, իսկ հարսնացուի ընկերուհիները կրում էին քուրիկ, ծաղկոց, ծաղկվոր ամուսնները:

Ծաղկվորները, շրջապատելով հարսնացուին, զբաղեցնում էին նրան գոյացնելով, երգերով ու պարերով, նրա հետ մասնակցում այն հյուրասիրություններին, որ կատարում էին մերձավոր ազգականները և բարեկամները: Այդ հյուրասիրությունը կրում էր աղջիկ դուրս հանել անունը: Ծաղկվորները պաշտպանում էին հարսնացուի զգեստները, զարդերը ոչ միայն թագվորցիների, այլև մյուս բոլոր պատանիների «հափշտակումներից»:

Մինչև 20-րդ դարի սկիզբը պահպանված էր մականների առաջնորդ ընտրելու սովորությունը: Հարսանեկան ծիսակատարությունների ժամանակ մականները մականապետի գլխավորությամբ ունեին մի շարք

պարտականություններ: Նրանք թիկնապահների մեծ շրջապատում էին թագավորին և պաշտպանում նրան անակնկալներից՝ նրա զգեստները և մանավանդ գլխարկը «հափշտակելուց», որին մեծ եռանդով ձեռնամուխ էին լինում ծաղկոցավորները և բոլոր պատանիները: Ընդ որում, փեսան դիմադրելու կամ ծայր տալու իրավունք չուներ: Նա հնազանդորեն ենթարկվում էր մինչև իսկ այն աղջնակին, որը «կողպատում» էր իրեն:

Մականները կազմակերպում էին փեսային լողացնելու, ածիլելու, պսակի շորերը գոլքի երգերով հագցնելու և այլ ծեսեր, որ կատարում էին կախարդական-հմայական զանազան ձևերով. հսկում էին փեսայի հայրական տան ներսն ու դուրսը, որպեսզի նրա հակառակորդները կախարդությամբ թագավորի առնական կարողությունը խափանելու որևէ բան չկիրառեին, հարսանեկան արարողությունների ողջ ընթացքում նրանք կազմակերպում էին ծիսային և ժողովրդական խաղեր, մարզական մրցումներ և այլն:

Հարսնացուն դուրս էր գալիս սենյակից հանդերձ հագցնող կնոջ ուղեկցությամբ և ծանր քայլերով մոտենում թագավորին:

Տնից դուրս գալիս հարսնացուի հայրն ու մայրը, մույնիսկ մոտ ազգականները մոտենում էին «մնաս բարով» ասելու և սկսում լաց լինել: Փեսացուի կողմի բարեկամները մխիթարում էին ասելով. «Ի՞նչ եք լալիս,



աղջիկ եք տվել, տղա եք առել»:

Հարսնացուին հանելիս նրա եղբայրը փակում էր տան դուռը կամ դարպասը և չէր թողնում քրոջը տանեին՝ մինչև քավորը մի ընծա չտար: Դուրս գալով աղջկա տնից՝ հարսանեկան թափորն ուղղություն էր վերցնում դեպի եկեղեցի:

Պսակադրության արարողությունը տարբեր շրջաններում տարբեր ձևով էր ընթանում: Սովորաբար եկեղեցուն քահանան խոստովանեցնում էր հարսնացուին ու փեսացուին, ստանում նրանց համաձայնությունը, այնուհետև խորհրդավոր հանգույց անելով՝ նարոտը (կարմիր-սպիտակ կամ կանաչ-կարմիր գույների ոլորած բարակ

59

թելերը, գլխաշորերը) կապում էր նրանց գլխներին:

Երբ քահանան սկսում էր պսակադրությունը, քավորն ու քավորիկները, որպեսզի չարքերը փեսային չկաշեին, իրենց գրպաններում բացված փոքր կողպեքը կամ դանակը փակում էին չմոռանալով, սակայն, վերստին բացել:

Մեկ այլ շրջանում քահանան առանձին-առանձին խոստովանեցնում էր հարսին ու թագավորին, խրատներ տալիս նրան: Հատկապես թագավորին պատվիրում էր չորեք-մուտք, ուրբաթ-մուտք և կիրակ-մուտք երեկոներին, ինչպես նաև ամբողջ մեծ պասին հեռու մնալ առագաստից, ինչպես նաև կնոջ ծննդաբերությունից առաջ և հետո քառա-

սունք պահել:

Մեկ այլ վայրում էլ, մինչ քահանան պսակի խորհուրդ էր կատարում, թագավորը որոնում էր թագուհու մատների մեջ մոմի այն կտորը, որը թագուհու ընկերուհիներն էին դրել կանեմալով փորձել թագավորի հնարամտությունը: Մոմը գտնելուն պես տալիս էր մակարեաշուն, որպեսզի նա ցույց տա թագուհու ընկերուհիներին և զովի թագավորի խելքն ու շնորհքը, իսկ եթե թագավորը չէր գտնում մոմը, օգնության էր կանչում մակարեաշուն, որ նա մի ճար անի, ապա թե ոչ, փեսան ծաղրի առարկա կդառնար:

Պսակի խորհուրդը կատարելուց հետո քահանան Ավետարանը տալիս էր թագավորին, իսկ խաչը՝ թագուհուն և հարսնհորներին հրավիրում էր խաչհամբույրի:

Ջուռնա-դիոլ նվագելով բոլորը շարժվում

էին դեպի «հարսնքատուն»՝ հարսի տուն: Քեֆ էին անում, ուտում, խմում, ուրախանում, ապա շարժվում էին թագավորի տուն: Փեսայի տանը ապագա սկեսուրը մի սկուտեղի մեջ երկու լավաշ և մի փոքրիկ ափսեի մեջ կրակ՝ վրան խունկ դրած, պատեցնում էր տան չորս անկյուններով, ապա դուրս էր գալիս և այդ ամենը երեք անգամ պտտում թագավորի և թագուհու շուրջը: Հետո մի բարձր տեղից ընկույզ կամ կաղին էր շաղ տալիս հարսի գլխին:

Շատ հաճախ, երբ հարսանեկան թափորը մոտենում էր թագավորի տանը, մակարները սկսում էին երգել. «Թագվորի մեր դուրս արի...» երգը:

(շարունակելի)

Տաթևիկ ԱԶԻԶԵԿՅԱՆ

ԱՎԱՆԴԱՎԱՆ ՈՒՏԵՍՆԵՐ՝ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՐ

Ծեսերն ու ավանդույթները յուրաքանչյուր ժողովրդի հարստությունն են, որոնցով ներկայացնում են տվյալ ժողովրդի ազգային առանձնահատկությունները, արտացոլվում են ապրելակերպն ու գաղափարները: Ավանդույթների ու ծեսերի թվին կարելի է դասել նաև ազգային ուտեստներն ու նրանց պատրաստման եղանակները, որոնք նույնպես ժողովրդի ազգային նկարագիրն են ներկայացնում:

Խորվով, փախլավա, փոխինդ, գաթա, տոլմա, թրու, լավաշ ու էլի բազմաթիվ ուտեստներ հայկական ավանդական ճաշատեսակներ են, և կրում են ազգային կենցաղավարության տարրեր: «Ազրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամը, որ պատանեկան բազմաթիվ ծրագրերի հեղինակ է, այս անգամ իր ուշադրությունը սևեռել էր ազգային ուտեստների պահպանման խնդրին: Ծրագրի առաջնահերթ խնդիրներից է գյուղական համայնքներում բնակվող պատանիների (12-17 տարեկան) զբաղվածության ապահովումն ու առօրյա կյանքն ավելի հետաքրքրական դարձնելը:

«Ավանդական ուտեստներ» ծրագրի նպատակն է ներկայացնել ու պահպանել հայկական ավանդական կերակրատեսակները: 500 պատանիներ՝ շրջելով իրենց գյուղական համայնքներում և գրուցելով մեծահասակների հետ, հավաքել են հայկա-



կան ավանդական ուտեստների ավելի քան հինգ հարյուր բաղադրատոմս: Ավելի ուշ ազգային ուտեստների առանձնահատկություններն ամփոփվեցին «Հայոց ավանդական ուտեստ» պատկերազարդ գրքում, որի շնորհանդեսը կայացավ «Արմենիա-Մարիո» հյուրանոցում: Գրքում ներկայացված են Հայաստանի տասը մարզերի ավանդական կերակրատեսակները: Գիրքը միաժամանակ հաղորդակից է դարձնում նաև հյուրասիրության ավանդական կանոններին: Մինչ գրքի շնորհանդեսը, համրապետության մարզերից ժամանած պատանիները նախ ներկայացրին իրենց

պատրաստած ավանդական կերակրատեսակները, որն ուղեկցվում էր ազգագրական երգ ու պարով, փոքրիկ բեմադրություններով, ու յուրաքանչյուր մարզին հատուկ ծեսերով:

Տասնվեցամյա ժենյան Արմավիրի մարզի Քարակերտ գյուղից է ու արդեն մի քանի տարի մասնակցում է CARD-ի ծրագրերին: «Ներկայացնելու ենք Արմավիրի մարզի առանձնահատկությունները՝ հովվի պարն ու հովվիների սիրած կերակրատեսակը՝ խորվովն, որը պատրաստվում է ոչխարի մսից: Քարակերտում այն մատուցում են հաճախ հետ: Կերակրատեսակը ստացել է խորվու անունը, որովհետև միսը խորվում ենք թոնիրում: Հին ժամանակներում խորվելու ընթացքում երիտասարդ չամուսնացած տղաները ներկայացնում էին իրենց ուժն ու հմտությունները, իսկ աղջիկները պարում էին», պատմում է ժենյան:

«Հուսով եմ, որ կատարած աշխատանքը ոչ միայն հետաքրքրական էր, այլև ուսանելի: Ներկայացրել եք հայկական ավանդույթների, ճաշատեսակների բազմազանությունն ու առանձնահատկությունները, որոնք անկասկած կհետաքրքրեն օտարերկրացիներին: Ծրագիրը հաջողված է և համոզված եմ դեռ երկար ժամանակ կաջակցի հայ պատանիներին», միջոցառման բացման արարողության ժամանակ ասաց ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Ջոզեֆ Փեյնգերը:

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29 Московский кинофестиваль

«Райские птицы» Романа Балаяна

Московский международный кинофестиваль, не побоюсь некоторой высокопарности, был ознаменован появлением новой ленты маститого режиссёра, позволяющего себе раз в пять лет напоминать обществу о метаморфозах, имеющих место в нас и в обществе в целом. Фильм «Райские птицы» - не исключение. Это не полёты во сне и наяву, хотя опять в главной роли видим мы легенду нашего интеллектуального кино Янковского: мы летаем и... падаем вместе с героями ленты. Вернее, падаем в недавнее советское прошлое страны. Опросы, проведённые культурологами, показывают, что почти 70 % населения страдает ностальгией по советской жизни, где... каждому было по-своему комфортно жить. Фильм-размышление застаёт зрителя врасплох, побуждая осмыслить прожитое и обозначить горизонты дня грядущего.

На пресс-конференции режиссёр фильма был более чем лаконичен. Делая упор на творческое начало в каждом человеке, Балаян, в первую очередь, не отказывает своему верному зрителю в праве на собственное мнение обо всём происходящем. Создаётся впечатление, что он остро нуждается в нём, в этом проявлении индивидуального сознания.

Словно избегая всего коммерческого в кино, Балаян делает ставку на пространственное восприятие времени, в котором мы ещё недавно жили. Но мы продолжаем бытовать. И это не снимает с души ответственности за ближнего, ибо в каждом из нас заложен потенциал и нашей порядочности. Жажда полёта - такова доминанта картины, которая 21 июня нашла свою нишу на столь престижном кинофоруме. Сдаётся, верность идее - раскрывать в будничном мире прекрасного пребудет в неистовых страстях режиссёра на все времена. Да, им отснято не так уж много лент, зато каждая запала в душу, осталась расCTORенной в нас, благодарных зрителях. На днях известный телеведущий Андрей Максимов «пытал» Балаяна на предмет его пристрастий. Стойкий Роман Гургенович отстоял и перед голубым экраном право кино на человечность. Будничную, повседневную, правдивую во всех своих проявлениях. Кинокритики ещё скажут своё слово, но последнее, главное - за зрителем, не предающим своего любимого режиссёра.

Эдуард ПЕТРОСЯН,
обозреватель журнала «Горцарар».

«Թող որ նրա արվեստի ճանապարհը բարի լինի»



Չափազանց պարզ, անհմանալիորեն բարդ է պատանեկան աշխարհը: Գունավոր երազների, գեղեցիկի զգայուն ու անմիջական աշխարհ:

Այդպիսի ինքնատիպ ու նրբին աշխարհում է ապրում Վանաձորի Ստեփան Աղա-



«Ցեղասպանություն»



«Ջութակահարուհին»

ջանյանի անվան գեղարվեստի դպրոցի շրջանավարտ Աստղիկ Մելքոնյանը: Ինքն է ու իր ոսկե աշխարհը՝ գեղանկարչությունը, արվեստը:

Իր տարիքի համար լրջմիտ է, յուրաքանչյուր բառը մտովի վերլուծող, ծանր ու թեթև անող:

Խիստ տպավորվող է: Ունի տեսողական անուրանալի հիշողություն, վերարտադրելու մեծ կարողություն, պատկերավոր մտածողություն:

Այսպիսի նկարագրի տեր աղջնակին, աշխարհին ուղղված նրա հայացքներին՝ գեղա-

գիտական թե կենսափիլիսոփայական, բնորոշ են երևույթների ներթափանցման, ներկայացման հատկություններ, գեղեցիկի հավերժական զգացմունքներ:

Իր պատանեկան անկեղծ էությունն ու անխառն զգացմունքներն է բացահայտում Աստղիկը իր աշխատանքներում: Դրանցում ալիքվում են վառվում գույները, և թվում է, թե համր ստեղծագործություններից յուրաքանչյուրը պատանեկան լեզվով իր հեքիաթն է պատմում շրջապատի մարդկանց,



«Մեր համայնքը»



«Կնոջ կիսանդրի» (գծանկար)



«Ֆլորա»



«Իմ եկեղեցին»



«Բնության գրկում»

հայրենի բնության ու իր հայրենիքի պատմության մասին:

Նկարները՝ «Ցեղասպանություն», «Բնության գրկում», «Մեր համայնքը», «Իմ եկեղեցին», քանդակները՝ «Ջութակահարուհին», «Կնոջ կիսանդրի»-ն, իրենց թեմատիկ բազմազանությամբ ու բովանդակության խորությամբ են աչքի ընկնում առաջին իսկ հայացքից:

Աստղիկի մասին գրելիս հիշեցի այն աղջնակին, ում բանաստեղծական մի տողը հայտնի դարձրեց նրան աշխարհում՝

«Ես ամեն օր փակում եմ աշխարհն իմ կոպերով ...»

ճիշտ Աստղիկի տարիքին, ճիշտ նրա մեծան...

Ինչպիսին կլինի վաղվա օրը և նրա ճանապարհը...

Թող որ նրա արվեստի ճանապարհը բարի լինի:

Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ

լուսանկարներն Արմեն ՈՒՖԱՅԵԼՅԱՆԻ

«Հորելյանական 50-րդը»

Կեդրարյա կենսագրություն և գեղեցիկ ավանդույթներ ունեցող Վանաձորի Ստեփան Աղաջանյանի անվան գեղարվեստի դպրոցը, ավանդույթի համաձայն, ուսումնական տարին եզրափակեց հորելյանական 50-րդ հաշվետու ցուցահանդեսի բացումով, ուր ցուցադրված էր 21 շրջանավարտների դիպլոմային և սաների բնական հաշվետու աշխատանքներ: Իսկ խորագիրը՝ «Իմ նախնայաց երկիրը», ցույց է տալիս, որ մենք բոլոր ժամանակներում վերադառնում ենք մեր ակունքներին, մեր կենսափիլիսոփայությանը:

Մանկական մաքրամաքուր երեկակայությանը ստեղծված գործերը իրենց ուշագրավությամբ ներկաներին ստիպում էին բավականին երկար կանգնել Աշոտ Ժամհարյանի, Միքի Կուրդինյանի, Լիլիթ Սարգսյանի, Լիանա Քոչինյանի նկարների առջև:

Իսկ շրջանավարտներ Աստղիկ Մելքոնյանի, Յուլիա Դուկասյանի, Արման Ալեքսանյանի, Մարիամ Սինդոյանի դիպլոմային աշխատանքները ցույց են տալիս, որ նրանց ձեռքի հմտությունն ու թեմատիկ ընտրությունը արդեն տարբերվում են մանկական պարզությունից:

Քաղաքապետ Սամվել Դարբինյանի և քաղաքապետարանի



Ենմա Ոսկանյանը, դպրոցի տնօրեն՝ Արսեն Ռաֆայելյանը, Մարիամ Ամիրխանյանը, ուսմասվար՝ Ջենֆիրա Մոսինյանը, Սարգիս Սարգսյանը մի խումբ շրջանավարտների հետ

կրթության և մշակույթի բաժնի անունից բաժնի առաջատար մասնագետ Լ. Ջարգարյանը, շնորհակալագրեր հանձնելով դպրոցի բազմավաստակ մանկավարժներ Մարիամ Ամիրխանյանին, Ջենֆիրա Մոսինյանին և Ենմա Ոսկանյանին, նշեց. «Ստեփան Աղաջանյանի անունը կրող ձեր դպրոցը ստեղծման օրից իրոք եղել է գեղարվեստի ավանդները պահպանող-խթանող կրթամշակութային լավագույն օջախներից: Ձեր՝ գեղարվեստի նվիրյալների շնորհիվ սերունդներ են կրթվել և ինքնահաստատվել, ստացել գեղագիտական դաստիարակություն: Այսօր էլ, չնայած բազում դժվարությունների, դուք ձեր մեջ ուժ եք գտնում անմնացորդ աշխատելու, կրթելու, դաստիարակելու և սերմանելու սերը՝ առ արվեստն ու գեղեցիկը: Ի սրտե շնորհավորելով ձեզ դպրոցի հիմնադրման 50-ամյակի կապակցությամբ՝ շնորհակալություն եմ հայտնում անմնացորդ նվիրումի համար, մաղթում առողջություն, նորանոր հաջողություններ ձեր դժվարին և պատվավոր աշխատանքում»:

Արսեն ՌԱՖԱԵԼՅԱՆ
գեղարվեստի դպրոցի տնօրեն

Գրական-երաժշտական ցերեկույթ նվիրված Ռուսաստանի օրվան



Հայ-ռուսական վաղեմի բարեկամության և սերտ կապերի և մեկ ապացույց էր Լոռու մարզային կենտրոնական գրադարանում Ռուսաստանի օրվան նվիրված գրական-երաժշտական ցերեկույթը, որ կազմակերպել էին «Ռուսական մշակույթի օջախ»-ի կ-ն՝ նախագահ Ջուլիետա Կուզինյան և «Ռոսիա»-ի կ-ի Վանաձորի մասնաճյուղը՝ ղեկավար Նատալիա Այդինյան: Միջոցառմանը առավել շուք հաղորդեցին Գրիբոյեդովի անվան թիվ 11 դպրոցի երգչախումբն (ղեկավար Էմիլիա Ավետիսյան) ու Պուշկինի անվան թիվ 4 դպրոցի ասմունքողները:

Հնչեցին Ռուսաստանին նվիրված երգեր, ոգեշունչ բանաստեղծություններ: Իրենց հուզումնալի կատարումներով ներկաներին մեծ բավականություն պատճառեցին երգչախմբի մենակատարներ

Ռուզաննա և Լիանա Մխիթարյանները, Աննա Խաչատրյանը, Միլենա Սարգսյանը: Իր գեղեցիկ բանաստեղծություններով



ներկաներին ուրախացրեց թիվ 4 դպրոցի աշակերտուհի Ռուզաննա Հակոբյանը: Ներածական խոսքով հանդես եկավ «Ռուսական մշակույթի օջախ»-ի կ-ի նախագահ Ջուլիետա Կուզինյան՝ մասնավորապես նշելով. «Ռուսները Հայաստանում հենց այնպես համայնք չեն, այլ կազմակերպված համայնքային կազմակերպություն և հանդիսանում են Հայաստան աշխարհի մի մասունքը»:

Ցերեկույթը լավ արձագանք գտավ ու արժանացավ ներկաների բարձր գնահատականին:

սեփ. լրատվություն-Վանաձոր

Стихотворения Розалии Акопян

«Мне 16 лет. Я учусь в 4 школе имени А. С. Пушкина г. Ванадзора и очень люблю свою школу. Русским языком я хорошо владею благодаря моей маме - она украинка. С детства у меня появилась любовь к русскому языку и русской культуре».

Плач Ярославны.

(свободный перевод из «Слова о полку Игореве»)

Ярославны голос слышен над Дунаем. Обернувшись чайком, ранним свежим утром, улететь к любимому - вот ее желание! «О, Дунай, Дунай! Омочу рукав свой шелковый в чистых водах твоих студеных. Оботру живой водицей целительной раны тела моего любимого». На стене Путивля причитанья отправляет ветру, с ожиданьем помощи, с мольбами о покое воинам, что спят на поле брани. «О, Ветрило-ветер, веешь ты свободно. На море, на синем, корабли ласкаешь. Облаками в небе ты легко играешь. А мое веселье, как ковыль бросаешь». Слезы Ярославны до Днепра стекают. «О, Словутис Днепр, прекрасный! Ласковый бываешь ты и страстный.

Մրցաշար Սարչապետում

Տաշիրի շրջանի Սարչապետ գյուղում անցկացվեց տեղի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի վաղամեռիկ ուսուցիչ Աշոտ Պալաքյանի հիշատակին նվիրված շախմատի հերթական մրցաշարը:

Բացի համայնքի մասնակիցներից, մարզի տարբեր քաղաքներից ժամանած շախմատիստները 9 օր պայքարեցին՝ որոշելու հաղթողին: Իսկ հաղթողին սպասում էր դրամական պարգև ու գեղեցիկ գավաթ, որին արժանացավ եղիկ Բարսեղյանը:

Տարբեր մրցանակներից ու դրամական պարգևներից անմասն չմնացին երկրորդը ճանաչված Ստեփանական քաղաքի ներկա-



յացուցիչ Ֆրեդերիկ Սարգսյանը, 3-4 տեղերը բաժանած տաշիրցի Սարկ Բարսեղյանը ու վանածորցի Սպարտակ Պալաքյանը:

Սարչապետի գյուղապետ Արգան Պողոսյանը համայնքի, մասնակիցների ու իր անունից խորին շնորհակալություն հայտնեց ՀՀ Աժ դեպուտատ Կարեն Կարապետյանին, կազմակերպման ծախսերը հոգալու համար՝ մասնավորապես նշելով, որ նա ոչ մի անգամ չի մոռանում հայրենի մարզի ոչ մարզիկներին, ոչ մշակույթի մարդկանց, ոչ մանուկներին՝ հովանավոր կանգնելով բազմաբնույթ միջոցառումների:

սեփ. լրատվություն-Վանաձոր

Միջոցառում՝ նվիրված Պուշկինի հիշատակին

Հունիսի 6-ին, Լոռվա բնության գոտրիկ մի անկյունում Պուշկինի լեռնանցքում, ՌԴ գլխավոր հյուպատոսարանի և Հայաստանում Ռուսաստանի արտասահմանյան կապերի կենտրոնի ներկայացուցչության աջակցությամբ «Ռոսիա» հասարակական կազմակերպությունը, «Հարմոնիա» ռուսական մշակույթի ազգային կենտրոնը և ռուս-հայկական երիտասարդական նախաձեռնության կենտրոնը կազմակերպել էին երրորդ համրապետական միջոցառումը՝ նվիրված ռուս մեծ գրող Ա. Ս. Պուշկինի 209-րդ տարեդարձին: Միջոցառումը այն վայրում էր, ուր Պուշկինը հանդիպել է Գրիբոյեդովի դին տեղափոխող մարդկանց, ինչի կապակցությամբ հուշարձան է կառուցվել:

Ինչպես նշեց Հայաստանի «Ռոսիա» հի-ի նախագահ Յուրի Եկովենկոն օրն, իրոք, տոնական էր, որը մեկ անգամ ևս հավաստում է Ա. Պուշկինի մեծ ավանդը համաշխարհային գրականության մեջ: Հնչեցին նրա բանաստեղծություններից և բանաստեղծություններ նվիրված նրան: Հանրապետական միջոցառմանը մասնակցում էին Արմավիրից, Վանաձորից, Գյումրիից, Գավառից, Ստեփանավանից, Արմավիրից և Չարենցավանից ժամանած ընթերցասեր խմբեր: Գյումրի քաղաքում ՌԴ գլխավոր հյու-

պատոսի տեղակալ Ստանիսլավ Ռուժնիկով խոսքերով՝ Պուշկինը համաշխարհային մեծության գրող էր և միջոցառման նպատակն էր սերունդներին փոխանցել Պուշկինյան ոգին:

Միջոցառմանը մասնակցում էր Գյումրիում տեղակայված Ռուսաստանի 102-րդ ռազմական բազայի հրամանատարի դաստիարակչական գծով տեղակալ, գնդապետ Աշոտ Կարապետյանը, Երևանում գործող «Օդալուչ» հասարակական կազմակերպությունը (նախագահ՝ Ալեքսանդր Սերով), Ստեփանավանի Պուշկինի անվան (թիվ 2) միջնակարգ դպրոցի ներկայացուցիչներ:

Արմավան քաղաքը ներկայացրեց Պիեռ Բուդալյանը. նա ընթերցեց «Կովկասի գերին» պոեմից մի հատված:

Վանաձորից ներկա էին «Ռուսական մշակույթի օջախ» հասարակական կազմակերպությունը (նախագահ՝ Ջուլիետա Կուզինյան) և Գրիբոյեդովի անվան (թիվ 11) դպրոցի ներկայացուցիչներ: Ինչպես նշեց Ջ. Կուզինյան դեռևս 1978 թվականին իր և գեղանկարիչ Գեորգի Թովմասյանի նախաձեռնությամբ Պուշկինի լեռնանցքում բացվեց Պուշկինի և Գրիբոյեդովի հիշատակի տունը՝ արխիվային հարուստ նյութերով: Տան այցելուներն են եղել ակադեմիկոսներ, գրողներ,

դերասաններ, տիեզերագնացներ: Սակայն հետագայում այն դադարեց գործել: Տիկին Կուզինյան առաջարկեց այդ տեղում, որտեղ Պուշկինը տեսել է Գրիբոյեդովի դիակը, հիմնել նոր տուն-թանգարան այդ նախաձեռնության համար ներգրավելով Հայաստանում գործող ռուսական կազմակերպություններին:

Տպավորիչ էր նաև Ռուզաննա Մուրադյանի «Պուշկինի լեռնանցք» բանաստեղծությունը՝ նվիրված մեծ պոետին:

2009 թ. հայտարարվելու է Պուշկինյան տարի Ռուսաստանում: Եվ այդ կապակցությամբ հույսեր կան, որ նոր հուշարձաններ կտեղադրվեն աշխարհի տարբեր անկյուններում:

Միջոցառումից հետո Պուշկինի ծննդյան օրը շարունակվեց Լոռու մարզային գրադարանում, ուր ցուցադրված էր հարուստ գրքային ցուցահանդես: Երեխաների համար ցուցադրվեցին գեղարվեստական ֆիլմ և մուլտֆիլմեր Պուշկինի հեքիաթների սյուժեով, իսկ ուսանողների համար՝ գրողին նվիրված ռուսաստանյան գիտաժողովի նյութեր:

սեփ. լրատվություն-Վանաձոր

Господин, великий мой, прошу тебя,
приласкай любовь мою,
слеза пусть не превратится в море,
а глаза мои не высохнут от горя.
К солнцу светлому подняла влажны очи:
«Светло-Солнышко, ты греешь даже ночью.
Чувствуем тепло твоих речей.
Я молю тебя, в безводном поле
воинов-защитников земли,
пожалей их всех, побереги!
Жаждой мученической их ты не томи!
Не пошли на них горячие лучи!»
Ярославны стон звучит над Русью,
вещий колокол поет в печальной мгле...

Россия – матушка вскормила,
Его на ноги подняла.
И жизнь его вся воплотилась
В устах народа навсегда!
Московский озорной гуляка.

Конечно, он не без греха!
И плакала его собака,
К которой жизнь была так зла.
А за окном береза белая
И журавли летят печально вдаль.
И роща золотая, и рябина красная,
И клен опавший - все в моих глазах.
Почти сто лет прошло с тех пор,
Но песнь твоя звучит во мне,
И рожь волниста при луне.
И пел ты песни Шаганэ!

У буквы К в начале предложения
Стояла запятая в размышлениях.
Куда же ей встать, где место ей?
«Казнить нельзя помиловать!»
После «казнить»? После «нельзя»?
Не из простых задач эта.
Всего лишь просто запятая,
Но смысл большой несет она.
Стояла, думала, гадала,

Где место ей, чтобы она
Кому-то жизнь не поломала.
«Казнить нельзя, помиловать!»
После «нельзя» она решила.
И с облегчением вздохнув,
На строчку быстро заскочила.
Вот тут ей место! Так и быть!

Перо летописца

Перо летописца трудилось веками.
Для будущей жизни уроки писало.
От буквы, от слова-сокровища знаний!
Сокровища знаний лежат в переплетах.
Берем их оттуда мы снова и снова.
И мы сохраним тебя, русская речь,
Великое русское слово!

Сегодня языком Маштоца
Армения моя гордиться может.
Но позабыть она не хочет
основ славянского письма!

Տաշիրի շրջան

ՊՐԻՎՈԼՆՈՅԵ ԳՅՈՒՂԸ ԲԱԶՄԱԶԳ ՀԱՄԱՅՆՔ Է

Լոռվա բնության գեղատեսիլ անկյուններից մեկում՝ սարերի փեշին սփռված Պրիվոլնոյեն 167-ամյա պատմություն ունի: Գյուղը հայտնի է եղել իր յուրօրինակ ավանդույթներով, մաքրակենցաղ ու աշխատասեր բնակիչներով:

Ռուս-թուրքական պատերազմից հետո ռուսական կառավարության հրամանով որոշ ռուս զինվորներ պետք է մնային Հայաստանում: Նրանց մի մասը վերաբնակեցվեց այս բնակավայրում՝ ստանալով իր անվանումը՝ Պրիվոլնոյե, որ սկզբնական իմաստով նշանակում է «ոչ իրենց կամքով վերաբնակեցված» (Պրիվոլնոյեն հիմնադրվել է 1840 թ.-ին, ոչ իրենց կամքով վերաբնակեցված Պերմի, Մոսկվայի և Կալինինի մարզերից եկած կազակ զինվորներով, ովքեր այսուհետ թույլտվություն էին ստացել այստեղ բերելու իրենց ընտանիքները):

Գյուղը կառուցվել է կապիտան Կազակովի նախագծով՝ խստորեն պահպանելով փողոցների համաչափությունը: Տները ծղոտե տանիքներով էին, փոքր պատուհաններով, առանց պատշգամբների, բայց շատ ամուր: Առաջին բնակիչներից էին Սևյուպյուսովները, Ֆյոդորովները, Կիսյանները: Կարճ ժամանակ անց գյուղը համարվեց ցարական կառավարության կողմից Ուկրաինայից աքսորված ապստամբներով:

1875 թվականին Պրիվոլնոյեում կառուցվեց մինչ օրս կանգուն ուղղափառ եկեղեցին: 19-րդ դարի 40-ականներից մինչև դարավերջ հոգևորականներից բացի գյուղում գրագետ մարդ չկար: 1897-ին այստեղ արդեն ապրում էր 1868 մարդ, սոցիալիստա-



կան հեղափոխությունից հետո՝ 1926 թ.-ին՝ 2026, շատ ավելի, քան այսօր: Այդ տարիներին ստեղծվում է քառամյա դպրոցը, որը 1936 թ.-ին արդեն յոթնամյա էր, 1942-ից՝ տասնամյա: Պրիվոլնոյեի միջնակարգ դպրոցը աչքի էր ընկնում ուսուցման բարձր մակարդակով և կրթության բնագավառում տեղ գտած ձեռքբերումներով, հատկապես Պավել Կոսակինի ղեկավարության օրոք, ով իր կյանքի 25 տարիները նվիրաբերել է Պրիվոլնոյեի կրթությանը:

Նախորդ դարի 60-ականներին գյուղն արդեն բազմազգ էր: Այստեղ բնակություն հաստատեցին նաև հայեր, եզդիներ, ադրբեջանցիներ: Այս տարիներին Պրիվոլնոյեն աչքի էր ընկնում մաքուր փողոցներով և խնամված պարտեզներով, իսկ Ձատիկի տոնից առաջ տների պատերը անպայման սպիտակեցվում էին:

Գյուղն ուներ ակումբ, հիվանդանոց, պո-

լիկլինիկա, դեղատուն և նույնիսկ բժիշկների համար նախատեսված տուն: Խորհրդային կարգերի փլուզումից հետո, չնայած ռուս բնակչության մեծ մասը լքեց գյուղը, այնուհանդերձ այն մնում է մարզի տարաբնակ ամենամեծ գյուղը, 429 տնտեսությունից (1140 բնակիչով) 139-ը ռուսական համայնքի ներկայացուցիչներն են:

Մեր օրերում գյուղի բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն է:

Պրիվոլնոյեն էլ զուրկ չէ հոգսերից. ամենամեծ պրոբլեմներից մեկն էլ ծանապարհներն են, հատկապես Տաշիրին կապող: Մեկ տարի առաջ Ազգային ժողովի պատգամավոր Կարեն Կարապետյանի միջնորդությամբ

գյուղը զազաֆիկացվեց և արդեն ունի 200-ից ավելի բաժանորդներ: Սակայն ջրամատակարարման խնդիրը լրջորեն խոչընդոտում է գյուղի բարեկեցությանը: Շատ բնակիչներ ջրից օգտվում են պապեմական եղանակով:

Չնայած համայնքում գոյություն ունեցող հոգսերին՝ բնիկներն այստեղ համբերատար են և բարեհամբյուր, նորեկներն էլ հարմարվել են միջավայրին:

Գյուղի բնակիչները, անկախ ազգությունից և այստեղ բնակություն հաստատված տարիներից, ապրում են բարեկեցիկ ապագայի ակնկալիքներով և հուսում, որ երկրի սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման հետ մեկտեղ երբեմնի լիաշունչ գյուղը կվերագտնի իրեն:

սեփ. լրատվություն-Վանաձոր


Հայաստանի մարզիկներն օլիմպիական խաղերում

1956, Մելբուռն,

16-րդ ամառային օլիմպիադա

1956-ի նոյեմբերի 22-ին Մելբուռնի «Կրիկենտ Գրաունդ» մարզադաշտում հանդիսավորությամբ տրվեց 16-րդ ամառային օլիմպիական խաղերի մեկնարկը: Կանաչ մայրցամաք էին ժամանել 68 երկրների ավելի քան 550 մարզիկներ, որոնք իրենց հարաբերությունները պարզեցին 22 մարզաձևից: Այս անգամ ԽՍՀՄ հավաքականի 325 մարզիկների թվում էին Հայաստանը ներկայացնող մարմնամարզիկ Ալբերտ Ազարյանը, հնգամարտիկ Իգոր Նովիկովը, բռնցքամարտիկ Վլադիմիր Եմիլբադյանը, թեթևատեն վարդան Հովսեփյանը և սուսերամարտիկ Վալենտին Զեմնիկովը:

Մարմնամարզության մրցումներում հա-



մառ մրցապայքար էր ծավալվել Խորհրդային և ճապոնացի մարմնամարզիկների միջև:

Մրցումների պարտադիր ծրագրի կատարումից հետո ԽՍՀՄ հավաքականն ընդամենը 0,1 միավորով էր գերազանցում ճապոնացիներին: Այնպես որ, ամեն ինչ վճռվելու էր կամավոր ծրագրում: Խորհրդային մարմնամարզիկները հիմնալի ելույթներ ունեցան ու կրկին ցուցադրելով բարձր վարպետություն, թիմային պայքարում դարձան օլիմպիական չեմպիոններ: Այդ հաջողությունում իր արժանի ներդրումն ուներ նաև 27-ամյա անվանի մարմնամարզիկ, օղակների արքա Ալբերտ Ազարյանը: 1954-ին Իտալիայում կայացած աշխարհի առաջնությունում, որին Խորհրդային մարմնամարզիկներն առաջին անգամ էին մասնակցում, օղակների ապագա արքան հանդիսականներին մատուցեց արտասովոր նորույթ՝ «խաչ» վար-

ԿԱՐԾԱԴՈՇԻ ՕՐԸ

Տաշիրի շրջանի Լեռնահովիտ գյուղի մոտակայքում գտնվող Կարճաղոշ սարը երկար տարիներ ուխտատեղի է համարվել: Սակայն վերջին ժամանակներում Կարճաղոշն ունեցավ իր օրը:

Ամեն տարի հունիսի 17-ին սար են բարձրանում ոչ միայն Լեռնահովիտցիները, այստեղ գալիս են Տաշիրից, տարածաշրջանի գյուղերից: Քիչ չեն լինում ուխտավորներ՝ մարզից դուրս բնակվող նախկին տաշիրցիներ, Լեռնահովիտցիներ:

Այդ օրը Կարճաղոշի մատուռն ավելի բան մարդաշատ է լինում: Ուխտավորները վառում են մոմեր, աղոթքներ հղում Երկնային Տիրոջը, մտապահում ցանկություններ, մատաղներ անում:

Վառվող մոմերի մեծաքանակության պատճառով դրանք վառվում են դրսում՝ հատուկ պատրաստված տեղում: Հալված մոմերն էլ հետագայում վարպետ Արարատի ձեռքերով վերածվում են սրբապատկերների ու իրենց տեղը գտնում մատուռում:



Հավատքի ոգեշնչման այդ օրը, սակայն,

դուրս գալով կրոնական շրջանակներից, վերածվում է ժողովրդական տոնակատարության: Մարդիկ սար են բարձրանում հոծ խմբերով, ողջունում իրար և արտասանում օրվա ամենակարևոր բառերը. «Ուխտը ընդունելի լինի»:

— Սուրբ Կարճաղոշին, խնդրիմ, կաղաչիմ, որ երկրին խաղաղություն տա, մահին թանկություն, մեր ջախելներին էլ օտարությունից բարի վերադարձ:

Կարճաղոշի օրը հատկապես մեծ ուրախություն է երեխաների համար, ովքեր բնության գրկում ազատ վազվզելուց բացի ձեռք են բերում տարբեր խաղալիքներ:

Կարճաղոշ սարի գագաթից չի կարելի չհիանալ նեղուն սփռված չքնաղ բնապատկերներով, Լեռների գողտրիկ հովտում տարածված Լեռնահովիտով:

սեփ. լրատվություն

100

ժողովրդական ուղղահայաց դիրքում նա մարմնի աջ ու ձախ դարձումներ կատարեց, որոնք ապշեցրին բոլորին: Մարմնամարզական աշխարհն այդպիսի բան դեռ չէր տեսել: Այդ օրվանից վարժությունն «ազարյանական խաչ» անվանումն ստացավ:

Հռոմի աշխարհի առաջնությունը փառքի ուղեծիր դուրս բերեց Ազարյանին: Հաջորդ տարի նա դարձավ եվրոպայի չեմպիոն զուգափայտերի վրա կատարած վարժությունում, իսկ բազմամարտում արժանացավ արծաթե մեդալի: Իսկ օղակների վրա վարժություններում նա իր հավասարը չունեցավ իսՄՅՈՒ-ում:

Մելբուռնում Ազարյանը հասավ փառքի գագաթնակետին: Օղակների վրա նա կրկին անգերազանցելի էր: Եվ կրկին «ազարյանական խաչը» հիացմունքի բուռն ալիք առաջացրեց: Ազարյանի ելույթն արժանացավ ամենաբարձր գնահատականին (9,95), որի շնորհիվ հայ մարմնամարզիկը նվաճեց օլիմպիական չեմպիոնի տիտղոսը: Մեկ ոսկե մեդալ էլ նա ստացավ թիմային պայքարում իսՄՅՈՒ հավաքականի տարած հաղթանակի համար: Հանձին Ազարյանի, մարմնամարզության հայկական դպրոցը Շահինյանից հետո օլիմպիական իր երկրորդ չեմպիոնն ունեցավ:

Մելբուռնի օլիմպիադան Իզոր Նովիկովի համար 2-րդն էր: Մարզասերները նրան հաճախ էին հայ ժողովրդի ռուս գավակ անվանում: Նա ընտանիքով Երևան էր տեղափոխվել 1934-ին, 5 տարեկանում: Հելսինկյան օլիմպիադայից հետո Նովիկովը մեծ փորձ էր ձեռք բերել, դարձել էր իսՄՅՈՒ չեմպիոն, թիմային հաշվարկով աշխարհի առաջնության արծաթե մրցանակակիր: Մելբուռնում Նովիկովը ժամանակակից հնգամարտի

իսՄՅՈՒ հավաքականի ավագն էր: Սովետական հնգամարտիկների եռյակը (Ի. Նովիկով, Ի. Դերյուզին, Ա. Տարասով) անհաջող հանդես եկավ առաջին մրցաձևում՝ ձիավարությունում: Հրաձգության մրցումներում Նովիկովի թիմը զգալիորեն շտկեց դուրբունը՝ տեղափոխվելով 2-րդ հորիզոնական: Լողի մրցումներում իսՄՅՈՒ հավաքականը թիմային պայքարում հաղթեց և ընդհանուր հաշվարկով ընդհուպ մոտեցավ առաջատարին՝ ԱՄՆ-ի մարզիկներին: Ամեն ինչ պետք է վճռեր կրոսավազքը:

Նովիկովին հարկ եղավ դրսևորել կամային հատկանիշները: Մրցումներից առաջ սրկելիս բժիշկն անզուշորեն ասեղը նրա մկանի մեջ էր մտցրել: Չմայած դրան, Նովիկովը հաջողությամբ հաղթահարեց 4000 մ մրցատարածությունը և հավաքեց 40-րդ տեղը՝ ապահովեց առաջին տեղը: Թիմային հաղթանակի համար Նովիկովին իր թիմակիցների հետ արժանացավ ոսկե մեդալի: Իսկ անհատական պայքարում, ինչպես և Հելսինկիում, Նովիկովը կրկին 4-րդն էր: Օլիմպիական խաղերում հասած անհախաղեցի հաջողության համար Իզոր Նովիկովին շնորհվեց սպորտի վաստակավոր վարպետի կոչում:

Մելբուռնյան օլիմպիադայում Հայաստանին 3-րդ ոսկե մեդալը պարգևեց անվանի բռնցքամարտիկ Վլադիմիր Ենգիբարյանը: Առաջին կիսամիջին քաշում ռինգի անվանի վարպետը վստահ ելույթներ ունեցավ և արժանիորեն ճանաչվեց լավագույնը:

Վիճակահանությամբ Ենգիբարյանի առաջին մրցակիցը լեհ բռնցքամարտիկ, 1955 թ. եվրոպայի չեմպիոն Լեշեկ Դրոզդն էր: Մեկ տարի առաջ Արևմտյան Բեռլինում կայացած եվրոպայի առաջնությունում հայ մարզիկին չէր հաջողվել հաղթահարել լեհ բռնցքամարտիկի դիմադրությունը և նա ռինգը թողել էր

պարտված: Ենգիբարյանը մրցակցի նկատմամբ ռեւանշի հասնելու վճռականությամբ սկսեց մենամարտը: Երկուսն էլ ծախլիկ էին և ձգտում էին միմյանց հարվածներ հասցնել: Ենգիբարյանը գործում էր արագ ու համարձակ և շուտով նրա ծախլով դիպուկ հարվածը նոկդաունի ենթարկեց մրցակցին՝ նրան տապալելով գետնին: Դրոզդը միայն ութ հաշվից հետո կրկին ներգրավվեց պայքարի մեջ, սակայն այդպես էլ չկարողացավ վերջնականապես ուշքի գալ: Բոլոր 3 ռաունդներում էլ հայ բռնցքամարտիկի առավելությունը նկատելի էր և հաղթանակը միաձայն շնորհվեց նրան:

Դա չափազանց կարևոր հաղթանակ էր, որը Ենգիբարյանի համար ուղի հարթեց դեպի օլիմպիական բարձունքը: Նրա հաջորդ մրցակիցները ևս անկարող էին կանգնեցնել Ենգիբարյանի հաղթարտվածը: Հայ բռնցքամարտիկը գերազանց անցկացրեց մենամարտերը ֆրանսիացի Սալյուդենի, Հարավային Աֆրիկայի ներկայացուցիչ Լուրբերի հետ, իսկ եզրափակիչում գեղեցիկ ոճով «ծնկի բերեց» իտալացի Նենչիին: Օլիմպիական ոսկե մեդալը նրա փառքի գագաթնակետն էր: Նշենք, որ բացի Ենգիբարյանից, խորհրդային բռնցքամարտիկներից միայն Վ. Սաֆրոնովին ու Գ. Շատկովին հաջողվեց նվաճել օլիմպիադայի չեմպիոնի տիտղոսը: Այդ հաջողության համար նրանց շնորհվեց սպորտի վաստակավոր վարպետի կոչում:

Ռինգում առաջին լուրջ հաջողությանը Ենգիբարյանը հասել էր դեռևս 1948-ին՝ 16 տարեկանում Ռիգայում դառնալով «Աշխատանքային հերթափոխ» ընկերության կենտրոնական խորհրդի չեմպիոն: 1952-ին Ենգիբարյանը սկսեց մարզվել մարզաձևի

119

հմուտ մասնագետ էդուարդ Արիստակեսյանի մոտ՝ կատարելագործելով վարպետությունը: Հաջող էր մրցաշրջան-53-ը: Նախ մա Մոսկվայում խՍՀՄ առաջնությունում դարձավ բրոնզե մեդալակիր, ապա Բուխարեստում՝ ուսանողության և երիտասարդության համաշխարհային փառատոնում նվաճեց ոսկե մեդալ: Վարչավարչում անցկացված մայրցամաքի առաջնությունում ռինգի վարպետը չղավաճանեց իր ռճին և տպավորիչ հաղթանակներ տոնելով՝ ճանաչվեց լավագույնն իր քաշային կարգում: Երկու տարի անց մա Մոսկվայում նվաճեց խՍՀՄ չեմպիոնի կոչումը՝ արժանանալով լավագույն տեխնիկայի համար սահմանված հատուկ մրցանակի: 1956-ին, մինչ օլիմպիադան, Ենգիբարյանը տպավորիչ հաղթանակներ տոնեց խՍՀՄ ժողովուրդների Սպարտակիադայում և երկրի առաջնությունում՝ մեկ անգամ ևս հաստատելով իր բարձր կարգը: Եվ ահա այս ամենի բնական շարունակությունը գերազանցելույն էր օլիմպիական խաղերում:

Մելբուռնում Հայաստանի չորրորդ պատվիրակը՝ սուսերամարտիկ Վալենտին Չեռնիկովն անհաջող հանդես եկավ, իսկ թեթևատետ վարդան Հովսեփյանը հիվանդության պատճառով չմասնակցեց գնդի հրման մրցույթներին: Դա, իհարկե, ցավալի էր, քանի որ Վարդանը գտնվում էր գերազանց մարզավիճակում: 1956-ին, մինչ օլիմպիադան, մա մասնակցել էր հինգ մրցման և բոլորում էլ հաղթել էր երկրի նոր ռեկորդով: Տաշքենդում մասնակցելով խախտված օլիմպիական ընտրական մրցումներին, մա գունդը հրել էր 17 մ 67 սմ, որն ընդամենը 9 սմ-ով էր զիջում Իրփի Սկոբլայի եվրոպական ռեկորդին: Իսկ մինչ այդ, 1955-ին Թբիլիսիում մա դարձել էր երկրի չեմպիոն (17 մ 47 սմ), 1956-ին նվաճել խՍՀՄ ժողովուրդների Սպարտակիադայի և երկրի չեմպիոնի տիտղոսները:

